ԾՐԱԳԻՐ

«Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 10-ԱՄՅԱ

ԵՐԵՎԱՆ 2020

I. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամը հիմնադիրների կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, կրթական, հոգևոր, մշակութային, առողջապահական և այլ հանրօգուտ նպատակներ: Հիմնադրամի գործունեության հիմքում դրված է սոցիալապես ծանր պայմաններում հայտնված անձանց՝ «օգնություն ինքնօգնության համար» սկզբունքը: Հիմնադրամը իր գործունեությունը կազմակերպում է Դանիայում 1928թ.-ին Կոֆոեդ ամուսինների կողմից ստեղծված դպրոցի օրինակով:

«Հանս Քրիստիան Կոֆոեդ» հիմնադրամը ստեղծվել է 2000 թվականի փետրվարի 02-ին, հիմնադիր ժողովի թիվ 1 որոշմամբ:

Կազմակերպության պետական գրանցման վկայականի համարն է՝ 03Ա068081

1.1. Կազմակերպության նպատակները և խնդիրները

«Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի նպատակներն են (ըստ կազմակերպության կանոնադրության)

1. *Սոցիալական պաշտպանության ոլորտ*
   1.1. Անապահով անձանց կամ խմբերին (այսուհետ՝ շահառու) աջակցության տրամադրման ծրագրերի իրականացում
   1.2. Սոցիալապես անապահով անձանց կյանքի որակի բարձրացում

2. *Կրթական ոլորտ*
   2.1. Սոցիալապես անապահով և աշխատաշուկայում անմրցունակ անձանց մասնագիտական հմտությունների ուսուցում, վերապատրաստում և կարողությունների զարգացման ծրագրերի իրականացում: Դասընթացի ավարտից հետո աջակցում աշխատանքի տեղավորման գործընթացում:

3. *Սոցիալ-առողջապահական ոլորտ*
   3.1. Տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի տրամադրման ծառայությունների ծրագրերի իրականացում:

«Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի խնդիրներն են (ըստ կազմակերպության կանոնադրության)

1. Սոցիալապես ծանր պայմաններում հայտնված անձանց աջակցություն՝ «օգնություն ինքնօգնության համար» սկզբունքով:
2. Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ կազմակերպությունների ներգրավմամբ ծրագրերի իրականացում՝ ուղղված անօթևանների, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, փախստականների, ազատազրկումից վերադարձած անձանց վերասոցիալականացման խնդիրների լուծմանը:

1.2. Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը

«Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով, «Բարեգործության մասին» ՀՀ օրենքով, կազմակերպության կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

«Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.3. Կազմակերպությունում առկա մարդկային ռեսուրսներն են.

Ղեկավար կազմ՝

1. Շավարշ Գագիկի Խաչատրյան - տնօրեն

Մշտական աշխատողներ՝

1. Շավարշ Գագիկի Խաչատրյան - տնօրեն
2. Ասյա Վախթանգի Գալոյան - գլխավոր հաշվապահ

Ծրագրի իրականացման համար ներգրավված անձինք՝

1. Համլետ Մինասի Հովհաննիսյան- ծրագրի համակարգող
2. Համայակ Արմենի Ղազարյան- սոցիալական աշխատող
3. Սուսաննա Ավետիքի Ումուտյան- հոգեբան
4. Սոնա Հենրիկի Մխիթարյան- բժիշկ
5. Վարուժան Հովհաննեսի Վարդանյան- իրավախորհրդատու
6. Աննա Սմբատի Պապիկյան- սոցիալական սպասարկող
7. Ալվինա Ռոբերտի Գրիգորյան- սոցիալական սպասարկող

«Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի աշխատանքների իրականացման գործում ներառված են 30 աշխատակիցներ:

1.4. Կազմակերպության գործունեության ոլորտը՝

«Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի գործունեության ոլորտներն են՝

1. Բարեգործություն
2. Սոցիալական պաշտպանություն
3. Առողջապահության ապահովություն
4. Կրթություն

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

2.1. Ծրագրի նպատակը

1. ***«Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» ծրագրի հիմնական նպատակը և մատուցվող ծառայությունները՝***

1.1. Որոշակի բնակության վայր չունեցող, անօթևան, 18 տարին լրացած անձանց ժամանակավոր կացարանով ապահովում

1.2. Հագուստով, կոշկեղենով և անձնական հիգիենայի պարագաներով ապահովում

1.3. Սննդով ապահովում՝ օրական 2 անգամ, անհրաժեշտության դեպքում նաև դիետիկ

1.4. Սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրում

1.5. Բժշկական օգնություն՝ առաջին բուժօգնության և սպասարկման ծառայություններով, այդ թվում նաև դեղերով ապահովում

1.6. Իրավաբանական ծառայությունների տրամադրում

1.7. Անօթևանին ընտանիքի հետ սոցիալական կապերը վերականգնելու, ընտանիք վերադառնալու աջակցություն և սոցիալական ներառման նպաստում

2. *Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» ծրագրի նպատակը՝*

2.1. Խնամքի կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ տարեց և /կամ/ հաշմանդամություն ունեցող, 18 տարին լրացած անձանց տնային պայմաններում խնամքի ու սպասարկման ծառայությունների ապահովում

2.2. Խնամքի ծառայություններ հայցող շահառուի անհատական կարիքների գնահատում և գնահատված կարիքներին համարժեք ծառայությունների մատուցման պայմանագրի կնքում

2.3. Անհատական սոցիալական ծրագրի կազմում

2.4. Խնամքի ծառայությունների տրամադրման ժամանակացույցին և անհատական սոցիալական ծրագրին համապատասխան մատուցվող ծառայություններ

2.5. Կենցաղային սպասարկում,

2.6. Բժշկական օգնություն և սպասարկում,

2.7. Սոցիալական խորհրդատվության տրամադրում,

2.8. Հոգեբանական օգնության տրամադրում,

2.9. Ուղեկցման ծառայություններ,

2.10. Շահառուների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն,

Սույն ծրագրերի իրականացման համար հիմք են հանդիսացել՝

1. ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման N 5 հավելվածի 7-րդ աղյուսակի «1032 Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց» ծրագրի, «11005 Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» միջոցառման իրականացման նպատակով կնքած Պետության կողմից դրամաշնորհի ձևով «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամին տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին N ԴՏՊ-1032-11005/20-ԿԵ1, ԴՏՊ-1032-11005/20-ԿԵ2, ԴՏՊ-1032-11005/20-ԿԵ3 պայմանագրերը:

2. ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման N 5 հավելվածի 7-րդ աղյուսակի «1032 Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց» ծրագրի, 11002 «Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» միջոցառման իրականացման նպատակով կնքած Պետության կողմից դրամաշնորհի ձևով «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամին տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին N ԴՏՊ-1032-11002/20-ԱԳ պայմանագիրը:

2.2. Ծրագրի իրականացման համար ֆինանսական աղբյուրները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 10 տարիների համար կազմակերպության գործունեության կազմակերպման ֆինանսական աղբյուրներն են հանդիսանում.

1. Դանիայի Կոպենհագեն քաղաքի հայ համայնքի «Դան-Արմեն» հասարակական կազմակերպություն
2. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
3. Երևանի քաղաքապետարան
4. «Հայկական նախաձեռնություն» բարեգործական հիմնադրամ, Իրավաբանական հասցե՝ Ուկրաինա, 03113, ք. Կիև, Պերեմոգի պողոտա, տուն 62-բ
5. Այլ դոնորներ

2.3.Ծրագրի իրականացման ժամկետները

Սույն ծրագրերը նախատեսվում են իրականացնել առաջիկա 10 տարիների ընթացքում:

2.4. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները

Սույն ծրագրերի շրջանակներում առաջիկա 10 տարիներին «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամը նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1-ին տարվա ընթացքում՝

1. «Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» գործող ծրագրի շարունակում
2. «Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» գործող ծրագրի շարունակում
3. «Օգնություն ինքնօգնության համար» նորացված ծրագրի վերսկսում

2-րդ տարվա ընթացքում՝

1. «Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» ծրագրի շարունակում
2. «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի շենքային համալիրում անօթևան մարդկանց կացարանին կից ընդունիչ-ախտորոշիչ բաժանմունքի ստեղծում
3. «Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» ծրագրի շարունակում
4. «Օգնություն ինքնօգնության համար» նորացված ծրագրի շարունակում
5. «Սոցիալան Շտապ Օգնություն» ծրագրի շարունակում

3-րդ տարվա ընթացքում՝

1. «Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» ծրագրի շարունակում
2. «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի շենքային համալիրում անօթևան մարդկանց կացարանին կից ընդունիչ-ախտորոշիչ բաժանմունքի մատուցվող ծառայությունների տեսակների ավելացում
3. «Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» ծրագրի շարունակում
4. «Օգնություն ինքնօգնության համար» նորացված ծրագրի շարունակում
5. «Սոցիալան Շտապ Օգնություն» ծրագրի շարունակում

Վերը նշված ծրագրերի իրականացման շարունակում և նոր ծրագրերի ընդգրկում 4-րդ տարվանից 10 –րդ տարիների ընթացքում:

2.5. Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքը

Սույն ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է, որ «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամը կապահովի

1. **«Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի «Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» ծրագրով.**

2021թ. հունվարի 1-ից առ 2030թ –ի հունվարի 1-ը «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի «Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» ծրագրի հնարավոր շահառուներ կարող են հանդիսանալ թվով մոտ 1320 անօթևան անձինք:

- Կատարվելիք սոցիալ-հոգեբանական աշխատանքի արդյունքում իրենց հարազատների մոտ ընտանիք կարող են վերադառնալ մոտ 185 շահառու
- Ինքնուրույն կյանքի կվերադառնան 440 շահառու

- Խնամքի մասնագիտացված կենտրոններ, տուն ինտերնատներ կարող են տեղափոխվել մոտ 175 շահառու
- Հիմնադրամի դասընթացներում մասնագիտական հմտություններ ձեռք կբերեն կամ կվերամասնագիտացվեն մոտ 80 շահառու
- Աշխատանքի կտրողավորվեն մոտ 175 շահառու
- Բժշկական մասնագիտացված կենտրոններում անվճար սպասարկում կարող են ստանալ մոտ 90 շահառու
- Կփաստաթղթավորվեն /այդ թվում ՀՀ քաղաքացիություն, նոր անձնագրեր կստանան/ մոտ 450 շահառու

2. «Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» ծրագրով.

2021թ. հունվարի 1-ից առ 2030թ –ի հունվարի 1-ը «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի «Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» ծրագրի հնարավոր շահառուներ կարող են հանդիսանալ թվով մոտ 900 անձինք:

Կատարվելիք սոցիալական, սոցիալ-հոգեբանական և անհատական աշխատանքի արդյունքում

- Կենցաղային սպասարկում կստանա մոտ 900 շահառու
- Բժշկական օգնություն և սպասարկում կստանա մոտ 180 շահառու
- Սոցիալական խորհրդատվության կտրամադրվի մոտ 140 շահառուի
- Հոգեբանական օգնության կտրամադրվի մոտ 380 շահառուի
- Ուղեկցման ծառայություններ կստանա մոտ 220 շահառու

Տնօրեն Շ. Խաչատրյան